# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
# « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

01-ը փետրվարի 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ.Գասպարյան (ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ոսկանյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս.Նիկոյան

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Տ.Աբրահամյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Տ.Աբրահամյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Տ.Աբրահամյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«հեղուկ վառելիքի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Ֆլեշ» ՍՊԸ |
| 2 | «Մաքսհուր» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են « ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Մաքսհուր» ՍՊԸ-ի, որի ներկայացրած էլեկտրոնային հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը(բանկային երաշխիք), ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Տ.Աբրահամյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգին գնային առաջարկ է են ներկայացրել հետևյալ մասնակիցները: Տես հավելված 1:

Հավելված 1

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. գինը | Հաղթող կազմակերպության | | | Մրցույթին մասնակցած այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | Ընդհանուր գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 8 | 9 | 9.1 | 12 | 15 | 15,1 |
| 1 | Ավտոբենզին Պրեմիում (ԱԻ-95) կտրոն | Լ | 66670 | 24614564 | ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | | | «Ֆլեշ» ՍՊԸ | 24 445 666,67 | 29 334 800 |
| | | | | | | | | «Մաքսիմ» ՍՊԸ | 25 279 041.67 | 30 334 850 |
| 2 | Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92) | տ | 1700 | 822800000 | ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | | | «Ֆլեշ» ՍՊԸ | 765 000 000,00 | 918 000 000 |
| | | | | | | | | «Մաքսիմ» ՍՊԸ | 779 166 666.67 | 935 000 000 |
| 3 | Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)կտրոն | Լ | 833330 | 313582079 | ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | | | «Ֆլեշ» ՍՊԸ | 291 665 500 | 349 998 600 |
| | | | | | | | | «Մաքսիմ» ՍՊԸ | 302 082 125 | 362 498 550 |
| 4 | Ամառային դիզ.վառելանյութ | տ | 1680 | 796320000 | ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | | | «Ֆլեշ» ՍՊԸ | 735 000 000 | 882 000 000 |
| | | | | | | | | «Մաքսիմ» ՍՊԸ | 749 000 000 | 898 800 000 |
| 5 | Ամառային դիզ.վառելանյութ կտրոն | Լ | 58824 | 23700189,6 | ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ | | | «Ֆլեշ» ՍՊԸ | 21 323 700 | 25 588 440 |
| | | | | | | | | «Մաքսիմ» ՍՊԸ | 21 813 900 | 26 176 680 |
| 6 | Ձմեռային դիզ. վառալանյութ | տ | 1 000 | 612 000 000 | «Ֆլեշ» ՍՊԸ | 470833333 | 565000000 | «Ֆլեշ» ՍՊԸ | 470 833 333,33 | 565 000 000 |
| | | | | | | | | «Մաքսիմ» ՍՊԸ | 479 166 666.67 | 575 000 000 |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ գնման ընթացակարգի 1-5-րդ չափաբաժինների մասով մասնակցի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են պատվիրատուի տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, իսկ 6-րդ չափաբաժնի մասով հրավերի պայմաններին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 09.02.2018թ. ժամը 12:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) անցկացվել են բանակցություններ:Բանակցությունների արդյունքում <Ֆլեշ> ՍՊԸ-ն նվազեցրել է ներկայացրած գնային առաջարկը միայն 4-րդ չափաբաժնի մասով՝ առաջարկելով 870240000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, որը սակայն գերազանցում է պատվիրատուի տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, մյուս չափաբաժինների մասով մասնակիցը առաջարկած գները չի նվազեցրել: Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 1-5 րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա « ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

4.1 15 .02.2018թ. «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ և հաջորդական տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել հետևյալ մասնակիցները՝ տես Հավելված 1:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Տ.Աբրահամյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/8» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող** | Վ.Գասպարյան |
| **Գնահատող** | Գ.Ռստոյան |
| **Գնահատող** | Կ.Մխիթարյան |
| **Գնահատող** | Ս.Նիկոյան |
| **Գնահատող** | Ա.Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ.Աբրահամյան |